

Տարեկան գինն է 10 ռուբլի:
վեց ամսուան՝ 5 ռ., երեք ամսուան՝ 3 ռ., ամիսը 1 ռ.:
Առանձին համարներով խրատանքը 5 կոպեկ:

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի և տոն օրերից
ստատուսան 11—2 ժամը կեսօրից յետ:

Օտարադպրոցիցի դիմում են ուղարկել խմբագրության նախ-
նախ հասցեով:— In red. uazetnoy «Mery Akhmatov», ex Tif-
lis, kum Redaction de «Meghou Hafastan», à Tiflis.
(Caucase).



Խմբագրությունն ուղղած է յոգուածները և թէ նամակները
պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ և հասցեով:
Խմբագրութիւնը կարող է փոխփոխել, ուղղել և կրճատել յոգուած-
ները: Խմբագրութիւնը չի փրկու չէ ստանում յետ ուղարկել յո-
գուածները և պահում է երկու ամիս մինչև ցատանք:

Հայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ:
Հայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով:
Հայտարարութիւններ ընդունվում են Խմբագրատանը, ակովկաս:
ճիւղանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են
պ. Համբարձումի պովիտունում:

ԱՌԱՋԻՎԱՅ 1885 ԹՈՒԱԿԱՆԻՆ
„ՄԵՐ ԱՅՈՒՆ“
ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ
Խմբագրատանը կը գտնուի և ծրագրով:

I) Պետական կարգադրութիւնը:— II) Առաջնորդողներ առօրեայ ամենա-
տեսակ խնդիրների մասին:— III) Ներքին տեսութիւն:— Տեղական և հասարակական
խնդիրների վերաբերութեամբ յոգուածներ և թղթակցութիւնը:— IV) Քաղաքա-
կան վիճակի վերայ յոգուածներ և լուրեր:— V) Մանր լուրեր:— VI) Խառն լու-
րեր:— VII) Բանասիրական:— Ֆէլիէտներ, Պատկերներ, Վեպեր, Մատենախո-
սութիւնը, Քննադատութիւնը, Գիտութեան և արհեստի վերաբերեալ յոգուած-
ներ:— VIII) Պատմական:— IX) Յայտարարութիւններ զանազան լեզուներով:

Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի կիսամայ 5 ռուբլի:

Վարդի և Կոնստանտին Ծախչը խմբագրութեան վերայ է:

Ստորագրվել կարելի է Թիֆլիսում: I) Խմբագրատանը:— II) պ. Բ.
Շահվերդովը գործարարութիւնում:— III) Զ. Գրիգորեանի գրախանու-
թիւնում:— IV) պ. Յ. Շահինեանցի խանութում:

Շահինեանցի: Առաջինը տարին «Մեղուն» կը քրատարակվի էջէ: Կամ «Եւ» անգամ,
եթէ հէշտին միջոցները կը ներեն:

ԹԻՖԼԻՑԻ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի 3 դեկտեմբերի

Հայ Թատրոնստիքայ խումբը յոգուած գրամատիկական Արուսի, Հայու-
հեաց, Բարեկարգական (կովկասում) և հայերէն զբոսի տպագրական
ընկերութեանց կը ներկայացնեն:

Արդիւնատր պաշտօն
II
Պիպօի Տիգուր

Մասնակցութեամբ տա. Գարսեանի, Գարսեանի, օր. օր. Յով-
հաննիսեանի, Բարսեղեանի պ. Ե. Լալեանի, Միրզաբեկեանի, Մանգիսեանի, Խա-
լաթեանի, Մամիկոնեանի, Լիսիցեանի և այլք: Սկիզբն 7 1/2 ժամին երեկո-
յան: Տոմարների զինք սովորական է: Տոմարները կարելի է ստանալ
պ. Եփրեմ Մատուրեանի խանութում և Թատրոնի գանձարանում:

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1885 годъ

на ежедневную литературно-политическую газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

ИЗДАВАЕМУЮ ВЪ ТИФЛИСѢ

(II годъ изданія)

ПРОГРАММА газеты общія всѣмъ литературно-политическимъ ежеднев-
нымъ изданіямъ, съ возможно широкимъ развитіемъ мѣстнаго отдѣла.

Подписная цѣна съ доставкой: и пересылкою въ Россіи: на годъ 10 руб.,
на 6 мѣс.—6 р.; на 3 мѣс.—3 р. 50 к.; на 1 мѣс.—1 р. 50 к.

Подписка принимается: въ Тифлисѣ въ конторѣ редакціи при Газетномъ
Агентствѣ В. ШАВЕРДОВА, въ С.-Петербургѣ въ книжномъ магазинѣ „Но-
ваго Времени“. Изгородные адресуютъ свои требованія въ Тифлисѣ, въ кон-
тору редакціи „Новаго Обозрѣнія“, при газетномъ Агентствѣ В. Шавердова.

Редакторъ-издатель А. В. Степановъ

(10—7)

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մասկվայի թղթակցութեան առթիւ:
Ներքին Տեսութիւն:— Թղթակ-
ցութիւններ Մասկվայից, Կ. Պոլսից,
Նոր-Նախիջևանից և Ղզաբից:
Քաղաքական:— Քաղաքական
լուրեր:
Մանր լուրեր:
Յայտարարութիւններ:
Բանասիրական:— Վիճակ:

ԹԻՖԼԻՍ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1884 Թ.

«Մեղուն» ներկայ համարում հը-
րատարակում ենք թղթակցութիւն

Մասկվայից օր պիտուի չքաւոր հայ
ուսանողների թշուառ վիճակն է նը-
կարագրում: Իրաւի դժուարէ կար-
գալ այդ նկարագրին և չզգալ մեր
հասարակութեանց բարոյական աղ-
քաւորութիւնն ու ստորութիւնը որ
նոցա ուսանող դասակարգն այդ ա-
տիճան խեղճութեան մէջ է անցնում
իւր օրերը: Ուսանող դասակարգն
որ նոցա ապագայ կեանքի աղբ ալ-
տի դառնայ, նոցա մտաւոր և բա-
րոյական հարստութիւնը կաղմէ: Ու-

սանողն ապագայում հասարակու-
թեանց ընտիր անդամը պիտի դառ-
նայ օրինակ դառնալով բարոյակա-
նութեան, ազնուութեան և զթա-
սրտութեան հասարակական շահ-
րի պաշտպանութեան ու նախնա-
խորհրդութեան. բայց ուստի՞ նա պի-
տի ստանայ այդ յատկութեանց ըզ-
գացումն և երախտագիտութիւնից
զրգած նրանց արտայայտէ իւր կեան-
քում երբ նա զրանցից ոչ մէկը չէ
ստանում իւր վերաբերութեամբ իւր
նմաններից և ոչ իսկ ազգականնե-
րից: Շատ պարզ է, որ նա իրան
ընթացաբար տեսնելով երիտաւր-
դութեան ժամանակի նեղութիւն և ան-
զուրկ անձինքներով իւր սիրտն էլ
պիտի կռաւայնէ և ամեն ազնիւ ըզ-
գացմունքների համար փակէ նորա
դռները: Միթէ այսպիսի վիճակի
ծնունդ և սնունդ սերունդից իրա-
ւացի է, սպասել հասարակութեան
համար անձնագործ գործիչների աղ-
նիւ և զթոռ քաղաքացիք. ոչ. սո-
քա պէտք է լինին անձնակր, լոկ
րանց վերայ մտածող մարդիկ:

Բայց դրա յանցանքը մենք, հայ
հասարակութիւնըս ենք, որ չենք
մտածում նիւթականի հետ գանձե-
լու և բարոյական ու մտաւոր գան-
ձեր, առանց որոնց ոչ երջանկու-
թիւն կայ այս աշխարհում և ոչ
էլ բարօրութիւն. բայց սոցա մա-
սին երազող են ներկայումս ամեն
հասարակութիւնը:

Իմաստութիւն և բարոյականու-
թիւն ձեռք են բերվում ուսմամբ և
դաստիարակութեամբ, որոնց միջնորդ
պիտի լինին հայ հասարակութեանց
համար այդ քաղցած, տղոր ուսա-
նողները: Սրանց պէտք է պահպա-
նեն հասարակութիւնը, նոցա ուս-
ման և դաստիարակութեան վերայ
հոգան, որպէս զի իրանց երջանկու-
թեան և բարօրութեան աղբիւրնե-
րը՝ զիտութեան և կրթութեան աղ-
բիւրները չը ցամաքայնեն: Այժմ այս
մասին հոգալուցութիւն չը լինի ան-
թիւ նիւթական գանձերն էլ չեն
կարող մեզ հասցնել ոչ երջանկու-
թեան և ոչ էլ բարօրութեան, ո-
րանք զոյուլթիւն չ'ունին արաբոյ
գիտութեանց և բարոյականութեան:

Միթէ մեր մէջ անկիրթ և ա-
նուս բայց միլիոններ ժառանգող
բազմութիւն երիտաւրդների վարքն
կեանքն և ներկայ վիճակն ապացոյց
չեն այս ճշմարտութեան: Գիտու-
թիւնն և բարոյականութիւնն այն
զանն են, որին ոչ ցեղ և ոչ ու-
տիճ մերձեցող կարող են, իսկ դո-
ցա վարդապետները պէտք է լինին
ուսանողները հասարակութեանց հա-
մար որոնք այդ հասկանալով պէտք
է զանն անհատներն աղբիւրների դո-
ցա համար և այդ կարող են անել

եթէ զգան և ցանկանան: Մեզ հա-
մար այդ վերաբերութեամբ անհաս-
կանալի և անընդունելի է այն հան-
գամանքն թէ ներկայումս զրամա-
կան ճիւղաժամէ, զրամ չը կայ:
Սխալ է այդ կարծիքը, քանի որ մեր
կեանքը օրից օր աւելի ճիւղանում
և շաղկաւում է: Կասկած չը կայ,
որ եթէ մեր աղամարդիկ կանանչ
սեղանի շուրջը տարվան ընթաց-
քում իրանց սովորականից մի քա-
նի օր պակաս պատերազմեն և առ-
ժեռ, իրանց սեղանից մի աւելորդ
կերակուր պակասեցնեն, եթէ մեր
տիկնայք ու օրերըք տարուան ըն-
թացքում մի զոյգ ձեռնոց, անձու-
նի կեղծ գաւակ—տուրներ, մի
ձեռք շոր կամ նորաձեռն ոտնաման-
ներ պակաս գնեն և իրանց զաւա-
կայ և առ հասարակ ապագայ սե-
րնդի բարգաւաճման զոհն—այն-
պիսի գուժար կը կազմվի որ առա-
տուութեամբ կը բաւի թէ՛ ուսանող-
ների, թէ՛ գրականութեան և թէ՛
զարդների պահպանութեան:

Պատերազմի ժամանակի դրամի ա-
ռատութեան ժամանակի աւելորդից
մի բան զոհելը գիտութեան և դաս-
տիարակութեան համար, իմաստուն
անասութեան ապացոյց չէ: Իմաս-
տուն անասագիտութիւնն այն է,
որ ամեն տեսակ հանգամանքների
ժամանակ էլ զիտէ որոշել պիտոյք
ների կարեւորութեան համեմատ
ծախք և չն ների իրան աւելի կա-
րեւոր պիտոյքներն մի կողմ թողած,
զրամ շաղկաւ անպէտք և աւելորդ
պիտոյքների համար: Մենք այսօր
այսպէս ենք գործում: Վատնում ենք
աւելորդութեամբ շաղկաւութեան վե-
րայ և չ'ունինք զրամ ամենանհա-
ժեշտ կարեւոր համար և մեր այդ
անասագիտութեան յանցանքը
բարդիւրով զրամ ստույգութեան վերայ
կամենում ենք մենք մեզ խաբել և
մեր երեսի սեռութիւնը սրբել: Ոչ
մենք զրամ շատ ունինք—միայն որ
նորա կանոնաւոր գործադրութեան
համար խելք և բարի ցանկութիւն
ունենանք:

Ուսանողաց ինչպէս և այլ մտա-
ւոր և բարոյական հաստատութեանց
զահպանման համար հասարակու-
թիւնը բազմութիւն աղբիւրների կա-
րող են դառնել, եթէ միայն ցանկա-
նան և հանդէս դան ազնիւ զեկա-
վարներ և սրտաւառ գործիչներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Օ Ս Կ Վ Ա

17 նոյեմբերի.

Սարսափելի է այստեղ չքաւոր ու-
սանողների դրութիւնը ձմեռուայ
սկզբներում: Այդ ժամանակ նրանց

երեսին նայողը կարող է նկատել մի
տեսակ յուսահատ անհանգստու-
թիւն, անձարութիւն: Զբաւօր ու-
սանողը մինչև շինքը պարտքում
խրվել է, այն էլ ուժ մտ—իրա նը-
ման կարօտութիւն ունեցող ուսա-
նողների (հարուստները զի՞ չեն որ
աղքատներին պարտք տան) և եր-
կար ժամանակ չէ կարողանում պարտ-
քը յետ դարձնել, մի և նոյն ժամա-
նակը պարտատէրերը սաստիկ նիւ-
թական նեղութիւններ են քաշում:
Նա ձմեռուայ շրջանը ամառը զրա-
ւ է դրել հիմա փող չ'ունի յետ առ-
նելու, մի և նոյն ժամանակը ամա-
ռուայ շրջանը անկարելի է այս ցրտե-
րում եօլա գնալ առանց կեանքը
վտանգի ենթարկելու: Նրա սենեա-
կը ցուրտ է, տանտէրը երեք օրը մի
անգամ է վառում կամ բոլորովին
չէ վառում—ասում է տանա վարձը
աւելցրու է—ուրախութեամբ կը վա-
ռեն: Բայց չքաւոր ուսանողը ոչ
թէ միայն աւելցնել չէ կարող, այլ
անցեալ ամիսների վարձն էլ դեռ
չի տվել: Սրանով դեռ չը վերջացան
նրա ցաւերը: Նրան լեկիւնները գըր-
քեր են հարկաւոր—փող չ'ունի, որ
առնի: Նրանից ուսման թոշակ են
ուղում վերջին միջոցը զեկեմբեր
ամիսն են նշանակել, եթէ մինչև այդ
ամիսը չը կարողացաւ 25 ռ. վճա-
րել համալսարանին—պիտի դուրս
բցնեն նրան այստեղից: Ի՞նչ անի,
ո՞ւմ գիմի չքաւոր ուսանողը 25 ռ.
ձարելու համար, ընկերները այդքան
գուժար միանդամից չեն կարող հա-
նել իրանց աղքատիկ զրկանից: Հա-
րուստ ազգականները չը կան, կամ ե-
թէ կան, նրանցից էլ խէր չը կայ,
բարեկամներ նոյնպէս չը կան, որով-
հետեւ մեր ժամանակներում բարե-
կամներն էլ են փողով ձեռք բեր-
վում: Ո՞ր պատվով տայ իր զրուհը
խեղճ ուսանողը, ի՞նչ անի, կարող
է արդեօք այսպիսի պարագաներում
ուսում առնել, համալսարանում
մնալ: Օրը հարկւր անգամ վճռում
է թե՛ բարձրագոյն ուսման վրայ և
թողնել համալսարանը, գնալ բաղ-
դի ձեռքն ընկնել և հարկւր ան-
գամ փոխանում, որովհետեւ նա
տեսնում է, որ այն ժամանակ հա-
մարիւ թէ պիտի անօգուտ կորչեն
գիմնական աշխատանքների:

Այսպիսի անհանգիստ վերադմունքի
մէջ են անցնում չքաւոր ուսանողը
օրերը ձմեռուայ սկզբներում: մինչև
որ ձախտագիրը կամ դէս, կամ
դէնն է կարում: Է՛նց այդ վիճակի
մէջ են գտնվում այժմ Մասկվայի
չքաւոր ուսանողները: Ոչ մի նախ-
կին ուսանող, որ մեզանից չորս
հինգ տարի առաջ է աւարտել չէ
կարող երեւակայել այս տարուայ
չքաւոր ուսանողների դրութիւնը:

Անցեալ թղթատարով «Ներսէսեան կեդրոնական վարժարանի» հաստատման զաղափարը ծանուցելով, փափաք եւ յայտարարելով որ թիւ 10-ը խօսքը լուծեալ է և գործը խօսի, ուրախ եմ որ անցեալ կիրակի Բերտ Լատիանց տունը գումարուած ժողովը՝ ստորագրեալ 1500 ոսկին՝ իրական վիճակի մը մէջ գնեցնէ զատ, ժողովը յայն հանգանակութեամբ գործը տարողոցներու որոշում նա և արուեր է և իսկ ինքն ինքնապէս մասնախումբ մը ընտրուել է ատենապետութեամբ Մկրտիչ Եֆ. Եսայեանի. որոնց պաշտօնը պիտի լինի հանգանակութեան զօրակիսի և հետագայը ամբողջացնել, իւր հիմնադիրը յատուկ նամակով մը հաղորդել ազգ. կեդրոնական վարժարանի և նորա վաւերացումն ստանալ և երբեք սոյո հաստատութիւնը մասնաւորաց ձեռնարկ մը լինելէ դաւ ընդհանրով համայն հայ ազգին կողմանէ իրեն ընդհանուր երաւոյնապետութեան գեղեցկագոյն մասնաւոր կանգնել ի յիշատակ վեհագուհին պատրիարքաց, որ այսօր երկուստարդ բաժնուցեալ ի մէջ ի բացակայութեան ազգային գերագոյն գլխուն ընդ մէջ տեղութեան և ազգին, ի բացակայութեան երեսփոխանական ժողովոյ, որ տակաւին 15 օր սոյո ունի կրօնականչառական Ներսէս համար, ազգ. գործերն զանազան մասնաժողովոյ ձեռամբ կը վարեն և մինչև պատրիարքի ընտրութիւնը չսկսի և չը վերջանայ, ոչ մէկ էական կարեւորութիւն ունեցող գործ մը չէ կարելի անխաղաղ պատրիարքարանել:

Եթէ պատրիարքական ընտրութիւնը մինչև տարեկան աւարտի ինչպէս յուսամբ, մնացորդ 4 ամիսը պիտի բաւեն արդեօք ընդհանրական Հայրապետին ընտրութեան համար:

Սօսին.

Ճերմակ) ևս ինքս անձամբ անձին ճառախոսեալ էի նրան և նրա սիրազարդութիւններէ մի քանիսն ակամատես և վկայ եմ կոչած:

Արդ՝ սոյն այս Մամբրէ կայսկոպոսը վիճակումն էր գտնուած, երբ Նիկիոյ աղայի ու ոսկերիչ խաչօյն մէջ եղած անխաղաղ գործերն իրարմէս ի յայտ եկան: Արեւմտեան զեռ նոր իւր անխաղաղ գործերը, երբ մայրաքաղաքի փողոցները, իրանց խաչատուան կրօնքով, այդ գործերը ճնշեցնում էին ի իւր հասարակութեան:

Մամբրէն աճապարեց ոսկերչուն իւր ծածկանքով: Նա նրան խոստովանեցրեց և յետ ճամբից: Երբեքն էլ—մի տապալակ յորեն ու մի կնոճ իւր՝ պողի կոչուած եկեղեցական արդիւնքով: Յետոյ՝ կայսկոպոսը հրաւիրեց և Միւսա աղային, որ իրեն Անթուանիսն փեսայ՝ և զկուսականցը լաւ տեղակալ էր: Նրանից յետոյ առաջնորդի մօտ հրաւիրուեցան իրարմէս աղաներն ու արհեստագետներն: Աւագ քահանաները հօ կային ու կային: Գոյա բոլորին հետ, առանձինն և միասին, կարծող առաջնորդը, երկայն բարակ, խորհուրդ արաւ և, վերջ ի վերջոյ, հետեւեալ բանաւոր կարգադրութիւնը տնօրինեց:

Նախ՝ այն ծնողքը, որոց զաւակները այսօրեան ևս իրանց փողոցային եղբւրով Անթուան գերդաստանի անունը կը քաշըչեն, պարտաւորուած էին յօգուտ քաղաքի եկեղեցեաց կանթնքներէն երկրական հօսքով ձեռն տուելու: Առաջնորդի այս հրամանի մասին էր զուրուով ողջ հայերն ազգաբարձրութիւն

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ:

Նոր-Նախիջևանի քաղաքական վարչութեան քարտուղար յարգելի պ. Գարուսիանովին:

Երբ «Մեղրու» 85 և 86 ում համարները մեր քաղաքը հասան ու կարդացուեցան, որոնց մէջ ես գրած էի երկու կարեւոր խնդիրները՝ պարզուելու և զրուելու գալու մասին մի քանի օրեր զանազան խմբեր բաժնուած մարդոց մէջ բարձրացան հասարակութիւններ և վեճաբանութիւններ. բայց մեր քաղաքային վարչութեան քարտուղար պ. Գարուսիանովին որպէս օրէնսդէս և միշտ օրէնքներ յօդուածներով խօսող անձին մասամբ տաքացած, սկսաւ հասարակել իմ գրուածքներին և նոյա մէջ մի քանի սխալներին, որ մարդիկ չը հաւատան այդ գրածներին և այլն. և խոստացաւ ինձ, անձամբ, որ շուտով այդ յօդուածներին պատասխանը կը գրէ— պարզութիւնները՝ կ'ուղարկէ «Մեղրու» տը պարբերութիւն:

Պարոն Գարուսիանովին, իսկ և իսկ իմ ցանկութիւնն էլ այդ էր, որ հարցը վարժի և ճշմարտութիւնը երեսուն գայ, և ոչ թէ ծածուկ մնայ: Երկրորդ ժամանակ մնաւտուղով պատուած և հայերն սեպհականութիւնները սակաւ առ սակաւ սնհետանան անզգայ մարդոց ջանքերով:

Խոնարհարար խնդրում եմ ի սէր Աստուծոյ, շտապեցէ՛ք գրել ձեր պատասխանը— չուով մի պապի անսխալ լական կարծիքը— և ուղարկել «Մեղրու»:

Եթէ դուք հայերէն չը գիտէ՞ք, գրեցէ՛ք ռուսերէն, թարգմանիչները

պիտի անելին՝ քահանաները և արհեստագետը իւր արհեստագէտներով:

Երբեք վիճակի բոլոր եկեղեցեաց երեսփոխանները պարտաւոր էին, երկու տարի շարունակ, ոսկերիչ խաչօյններին և եկեղեցական անօթ և զարդերի չինութիւնը, նորոգութիւնը, մարդութիւնը ու կարկատանը: Ոսկերիչ խաչօն էլ, իրան հերթում, պարտաւոր էր այդ ամեն յանձնարարութիւնը կատարել սովորականից մի տոկոս պակաս ձեռնաժողով:

Երբեք Անթուանիսն Ախալցխայ տարած Գեօօրի-Գեօրի եկեղեցեաց արծաթեկներ փոխարէն նոյն դրուել եկեղեցեւոյ, փոխարէնաբար, պիտի զրկուէր մի խաչաւառ ու սկի՛՛՛ Երբեք մայր եկեղեցեւոյ աւագ խորանից: Ոսկերիչ խաչօն պարտական էր, չորս տարովայ ընթացքում, իւր արդար քրտնքով պատրաստել և վերագործել զիւրի եկեղեցեւոյ սեպհականութիւնը:

Չորրորդ՝ առաջնորդարանում ժողոված անձինքներից ցանկացողները հրաւիրուած էին դուրս գնալիս՝ մտնել և պիտի պատի առանձնատանեակը և այն տեղը դուրս գնալու զանձանակի մէջ, ըստ օրինակի իրան, սրբազան առաջնորդին և մայրաքաղաքի աւագ քահանաներին, կամեաւոր նուէր տալ յօդուած հայ զրկեալ արհեստարարին: Այսպիսով մի օրումը, չորս հարկու ռուբլի հաւաքուեցաւ: Այդ գումարով ոսկերիչ պէտք է իրան համար դուրս վարձէր և արհեստին վերաբերեալ բոլոր գործերը ձեռք բերել իսկոյն:

պատրաստ են և միշտ կը գտնուեն: Կամիք յարգելի Ռ. Պատիւանեանը, կամիք նոյն իսկ «Մեղրու» յարգելի խմբագիրը. ոչ մէկը չեն գտնուել թարգմանել ձեր գրուածքը:

Իսկ երբ դուք պատասխանը չէք գրել և միայն կը բաւականանաք ձեր ձանձրացուցիչ ձեռնարկով՝ թէ՛ կլուրի ընթերցարանի սենեակումը և թէ՛ մեր քաղաքային մէջ և ժողովրդին պարհիցնէլ, այն ժամանակ թոյլ տուէ՛ք ինձ ասելու, որ դուք հասարակաց շահերի բարեկամ չէք և միայն ձեր օրէնսգիտութեամբ պարծենալ սիրում էք և ժողովրդի աչքերին փռել փռել... և ոչ թէ նրան մի էական օգուտ տալ:

Յ. Պատիւանեան.

Նոր-Նախիջևան, 21 նոյեմբերի.

Ղ.Զ.Ա.Ր.

24 նոյեմբերի.

Մարդկային բնութեան յատուկ է ընտելանով ամենայն տեսակ սպաւորութեան, թէ ուրախ և թէ տխուր: Այս պէս մեր քաղաքացիք քանի տարի է նեղանալով իւր չարաբաստիկ վիճակից իւր ֆիզիքական և անտեսական կեանքում, կարծես թէ քաղաքի էլին սրտով և նոյա ջղերն անտարբեր պիտի մնային նոր հարուածի դէմ: Այսու ամենայնիւ Ներսէս պատրիարքի մահուան գոյգը մի նոր, բնականից վերահարուած տիեզ ժողովրդին, մի իսկաւ հաւաքանք հանեց նորա սրտի խորքից, նա հասկացաւ թէ որքան մեծ էր նրա կորուստը:

Տեղւոյ հայոց հոգեւոր զպրօքի վարչութիւնը մի փառաւոր հոգեհանգիստ կատարեց ամուսն 18-ին Պոլսոյ պատրիարք Ներսէսի համար:

Այս օրը լուսաւորեց եկեղեցում բաւական ժողովուրդ հաւարկից իւր ցաւակցութիւնը յայտնելու, զաղապարհը դրած էր եկեղեցեւոյ մէջ տեղը սե թա-

ւելով ծածկած, չորս կողմը դրած էին սեպհաբար աշտանակներ և պատել էին օրկորաց և արական ուսումնարանի սանիկները, զիպարդի վերայ խաչի և աւետարանի մէջ տեղ կանգնած էր մի մեծ և գեղեցիկ ծաղիկայ սրակ սե և պոլիտակ լայն ժապուէններով զարդարած, պտտի մէջ տեղ երեսում էր այս խորհրդաւոր խօսքերը. «Ներսէս, պատրիարքին, նուէր երախտապարտ պրտից»:

Մեծապատիւ տեղւոյ յաջորդը, որ այս օր՝ պատարագ էր մատուցանում, ամբիօնից մի գեղեցիկ քարոզ ասաց, բացատրելով ժողովրդին հանգուցեալ Ներսէս երեւելի գործերը:

Չկի պատարագին երբ բոլոր հոգեւորականը զաղապարհ շրջապատեցին հոգեհանգիստը կատարելու, երեւցաւ մեծարդոյ հոգարարձու պ. Աստուածատուական և խոր զգացած դամբանական որ տեղ պարեն ձառախօքը շատ յարմարին բերեց լուի իշանի այս խօսքերը՝ «Թէ կան մարդիկ, որոնք գիտեն երեսուն թաւաւած աւելի բարձր են, քան թէ ուրիշները որ կանգնած են», ձառը մեծ տպաւորութիւն գործեց հանգիստականների վերայ, որոնց թիւը կարող էր աւելի շատ լինել, այլ քաղաքների պէս մենք չենք կարող աւելի իսկուս բաղմունքին կար... բայց մեզ աւելի զարմացրեց, որ իսկ ամբողջ հոգեւորականաց դաս այս հանգիստաւոր օրը բացակայ էր (Աստուածամայն եկեղեցեւոյ պապաւորք քահանայք և զպրից):

Արգեօք ինչ սիրալի անցեւածիցի գործ կարող էր արգելք լինել հոգեւորականներին եկեղեցի գալ, եթէ մի և նոյն հոգեւորականը իւրեանց չափ համար, չը նայելով երբեմն որոշմանց և արեւածութեան գնում են հարուստ զաղապարհ քաղաքի միջին չէին: Կարող երկու երեք ժամ կատարել իւրեանց սուրբ պարագը հանդէսին մասնակից լինելով: Նորա գիտէին, որ այդ հանդէսը արդէն երկու շաբաթ է պարտաւորուած է, նորա պարտական էին գիտնալ, որ

այդ օրը կատարուած է հոգեհանգիստ մի այնպիսի մարդոյ համար, որ արժանապէս կրում էր իւր վեհ կոչումը: Ոմանք մեր հոգեւորականներից, վաղուց արդէն, պարզամտութեամբ Աստուծոյ տունը— իւրեանց սեպհական տունն են կարծում:

Մի և նոյն օրը Ղ.Զ.Ա.Ր. հասարակութիւնից երկու հեռագիր ուղարկեցաւ, մինը «Մեղրու»-ի և միւրը Կոստանդնուպոլսի պատրիարքարանը, յայտնելով իւր անմիջիկապ սրտի ցաւակցութիւնը Ներսէս Պատրիարքի մահուան պատճառաւ: Պատիւ նմանապէս ուղարկուած է Կոստանդնուպոլսի Այս դժուար է այս պիտի մեծ կորուստները տանել մեզ, որովհետեւ Ներսէսները զարեւով են երևում մեր ազգում: Յուսամբ ի Տէր, որ նորա ցանած սերունդը կը բերեն իւրեանց արդիւնքը և մեզ մնում է այժմ կրկնել՝ պ. ատենաբանի մաղթանքը, «Տուր մեզ հովիւ, որ ամբարնդէ ազգի և բարոյական կապը իւր եկեղեցեւոյ հետ, որով և մենք հոգով «նորոգված, մարով զարգացած երկրպագուք ընդ հոգով և ճշմարտութեամբ ամեն»:

P. Տ. Յոսեփի մի քանի բան ևս հաղորդել մեր քաղաքի կեանքից, բայց այժմ չեմ կարող, որովհետեւ այս մեծ տուղի առաջի ամենայն մասնաւոր ինտերես լուծւած է:

Բարեկամ.

ԲԱՂԱՔԱՆՆ

Կերանական պատգամաւորաց ժողովն իւր նմանը չ'ունի: Նա այնքան կուսակցութեանց բաժանած է, որ ոչ մէկը նրանցից չէ կազմում բաղմունքիւն, շատ կուսակցութեանց միջև իսկ ծրագիրը ճշգրտութեամբ և բացորոշ կերպով յայտնի չէ: Այս

*) Ծանօթ. խմբագրութիւնն ստացած չէ հեռագիրը:

Իսկ:

որ իրան կողակից ընտրելիս՝ առաջին հարցը նրա օժիտ ու բաժինըը չանելու: Չը տեսայ մի օրկորը, որ պատրաստ չը լինէր հենց առաջին հանդիպող սպամարդուն կին դառնալ:

Իւ այս անքնական երեւոյթը աւելի շօշափելի է մայրաքաղաքներում մասնաւոր:

Խնդրեմ ասա, ո՞ր է այնտեղ անհատական իրաւունքը, անձնական սէրը: Կամը— Չը կայ, ես, գնեալ, չեմ տեսնում:

Ներթապալուութիւնը իւր հովիւ բաղմունքով ճնշել ու խեղդել է ամեն բան: Ներթապալուութիւն— այս է ահա մեր ժամանակի իշտող տարը, գաղափարն է: Բայց դա էլ, իւր մեծամեծ վնասների հետ, անշուշտ և իւր օգուտները կ'ունենայ, երբ լուսաւորութիւնը մեր մէջ մուտք կը գործէ իւր հարազատ նշանակութեամբ իսկ, առ այժմ, մեր ժողովուրդը կերպարանափոխութեան անգոյն ու անորոյ վիճակի մէջն է գտնուում: Բարեմաղթներ, որ հասարակական կեանքին այս փոխանցական օրերն շուտ ու յաջողակ անցկենան և մեր գաղանքը մեր պատմութեան բաց թողած թելին:

(Կը շարունակվի.)

վեճակը ցայտ է տալիս որ Գերմանիա-
յի ներքին վարչութիւնը գոհացու-
ցիչ չէ որ նոյն իսկ պետութեան
պաշտպան կուսակցութիւնն անգամ
բազմութիւն չէ պատգամաւորաց
ժողովում: Կուսակցութիւնը անկա-
րող իրանց ծրագիրներն առաջ տա-
նելու իրանց յաջողութիւնը տես-
նում են միայն ներքին վարչութեան
խոշորութուն լինում իւր առաջադրու-
թիւնը կատարելու մէջ: Այդ նպա-
տակով հէնց ժողովն առաջին նիս-
տերում երեւցան միացած բոլորո-
վին միմեանց հակառակ ծրագիրներ
ունեցող կուսակցութիւնը կառավար-
չական կուսակցութեան դէմ և կաղ-
մելով բազմութիւն ձայների խոշոր-
ութունը եղան կառավարութեան առա-
ջարկներին ընդունելութեան: Նոքա
իշ, Բիսմարկին իւր ներքին քաղա-
քականութեան վերաբերութեամբ ի-
րանց ընդհանուր թշնամին համա-
րելով միացան ոչ թէ իրանց գա-
ղափարների նմանութեամբ և իրանց
համոզմամբ, այլ միայն արտաքին
թշնամու դէմ պաշտպանվելու և
նորա յաղթութեան խոշորութուն
նկատ համար: Հեռացաւ հանդէսից
ընդհանուր թշնամին իշխ. Բիսմար-
կը—այդ միութիւնն ինքն ըստ ինք-
եան պիտի քակվի և ոչ մէկն այդ
միացած կուսակցութիւններից կա-
րող չը պիտի լինի իշխանութեան
հասնելու պատգամաւորաց ժողովի
մէջ բազմութիւն կազմելով, որով-
հետև նոյա ծրագիրներն այնքան
տարբեր են միմեանցից, որ նոյա մէջ
համարաշխութիւն երեւակայել ան-
հնարին է: Այսպիսի տարտամ վի-
ճակն ամենաճանր է և քննասկարը մի
երկրի ներքին կառավարութեան հա-
մար:

Երբ կուսակցութիւնը երկրի մէջ
քիչ են թուով որոշ ծրագիր ունին
և բաւական էլ ոյժ—դա օգտակա-
ն է, որովհետև մէկն ու մէկը գերա-
զանց ուժով յաղթող է հանդիսա-
նում և որոշ ծրագրի հետեւելով
վարչութիւնը ձեռք առնում մինչև
որ միւս կուսակցութիւնն զօրանա-
լով իւր հակառակորդի թուլու-
թեամբ կամ արած սխալներով կը
յաղթէ և իւր ձեռք կ'առնու. երկ-
րի վարչութիւնն, որ կը վարէ նոյն-
պէս իւր որոշ ծրագրի համեմատ:

Այս պատերազմը յառաջադիմու-
թիւն է երկրի համար և կենքը, ո-
րովհետև վարչութիւնն ունի մի ո-
րոշ ուղղութիւն, որին հետևում է
մեծամասնութեան ոյժը ձեռքին ու-
նենալով: Բոլորովին այլ է մի կա-
ռավարութեան վեճակն, որ երկրի
ուժի մեծամասնութեան համակրու-
թիւնը չէ վայելում, մանաւանդ երբ
չը կայ մի այլ զօրեղ կուսակցութիւն
էլ, որ իւր ձեռք առնէր այդ վար-
չութիւնն ժողովրդեան մեծամաս-
նութեան համակրութեամբ: Ահա
այդ դրութեան մէջ Գերմանիայի ներ-
քին կառավարութեան վեճակը, ո-
րովհետև պատգամաւորաց ժողովում
երկու երրորդականը ձայների հա-
կառակ երեւցաւ Բիսմարկի ներքին
քաղաքականութեան:

Այս հանգամանքն իրաւամբ վայ-

րացրեց իշխ. Բիսմարկին, որ իւր
կառավարչական քաղաքականութիւնն այս դէպ-
քում էլ յոյց տալու համար, ար-
համարհանօք և յանդիմանութեամբ
դիմեց ժողովին: ասելով, Եւրոպան
ինձ վերայ ազդելի ճնշումն գործել
չը կարողացաւ միթէ դուք պիտի
այդ կարողանաք անել—այս օպառ-
նալիք է, որ ժողովը կարող է ար-
ձակվել: Բայց ի՞նչ օգուտ դրանից,
երբ նոր ընտրութիւններից յետ կա-
րող է նոյնաման և գուցէ աւելի
թշնամական ժողով կազմվի: Սա
Պրուսիայի բռնութեան հետեւանքն
է, որ Գերմանիայի միութեան խնդ-
րից առաջ ուղեորութեան և յա-
վըտակութեան տարիներում տա-
նելի և մինչև իսկ կարեւոր երեւ-
ցաւ: Բայց միութիւնը կայացաւ
այդ օգեորութիւնն անցաւ և այսօր
կարեւոր և հաճելի բռնութիւնն և
ատելի դարձաւ:

Ապագան գուշակելը դժուար է.
միայն հաւանական համարել է կամ
զիջողութիւն իշխ. Բիսմարկի կողմից
և կամ բռնութիւն:

ԲԱՆԱՐԱՅԱՆ ԼՈՒՐԵՐ.

Բէրլինից «Indép. Relges» լրագրին հե-
ռագրում են. — «Մինչև դաշնակցական
խորհրդի Բրատնչվեյդի հարցով դադա-
րվել—այդ խնդիրը մնում է նոյն վի-
ճակի մէջ: Աւելի և աւելի հաւանական
է դառնում այն, որ դաշնակցական խոր-
հուրդը կը հրաժարվի ճանաչելու կում-
բերանդի դքսի իրաւունքը Բրատնչվեյ-
դի դաշին վերայ: Այս որոշման համակու-
համար, յայտնում են այն միտքը թէ
կումբերանդի դուքը հէնց օրէնքով էլ
իրաւունք է՝ ունի Բրատնչվեյդի դաշին վե-
րայ, ճիշտաւ 1836 թ. 16-ին նոյեմբերի
պայմանագրութեան մէջ շանտովէրի թա-
գաժառանգութեան մասին ասած է, որ
եթէ արական սեռը վերջնայ Բրատն-
չվեյդի թագը անցնում է Հաննովերի
տիրող թագաւորին և փոխադարձաբար
Հաննովերի թագը անցնում է Բրատնչ-
վեյդի տիրող դքսին. բայց դուքս կում-
բերանդը ոչ տիրող թագաւոր է Հան-
նովերի և ոչ էլ տիրող դուքս է Բրատն-
չվեյդի. ուստի և նա չունի օրինաւոր
իրաւունք լինելու Բրատնչվեյդի հանգու-
ցեալ դքսի ժառանգը: Պրուսական ի-
րաւաբանների որոշմամբ Բրատնչվեյդի
դաշն պէտք է համարվի պարագ և երկ-
րի կառավարութիւնը յանձնվի խնամա-
կալ կառավարչի, որ պիտի նշանակվի
համաձայն երկրի օրէնքների խնամա-
կալական կառավարութեան մասին: Մի-
ակ օրինաւոր ժառանգ կարող է լինել
Պրուսիայի թագաւորը, որին իրաւամբ
պատկանում է Բրատնչվեյդի դքսութեան
Jura encoresobilia, որովհետև նա է
կաննովերի թագի ժառանգը և իսկական
թագաւորն այս երկրի, որ միացած է
Պրուսիայի հետ 1866 թ. իրողութիւնից
յետ: Սպասում են, որ դաշնակցական
խորհրդի վճիռն այս մտքով կը լինի:

Յրանսիական պատգամաւորաց ժողո-
վում Տոնկինի խնդիրը վճռվեցաւ յո-
գուտ նախարարութեան: Չը նայելով հա-
կառակ կուսակցութեանց ամեն ջանքե-
րին այդ խնդիրը քննարկար ցոյց տա-
լու Յրանսիայի շահերին և Յերբիի նա-
խարարութեան վերայ ստուերի գցելու
ժողովը բազմութեամբ ձայների որոշեց
պահպանել Յրանսիայի պատիւը և ստի-
պել Չինաստանը յարգել Տեան-Կոնֆի
դաշնագրութիւնն և սրբութեամբ կատա-

րել այն Պատգամաւորաց ժողովը վճռ-
ուեց նշանակել պատերազմի շարունա-
կութեան համար կարեւոր 43 միլիոն
ֆրանք ծախքը: Արդէն և օգնական պո-
րեքը հետգհետեւ ուղարկվում են արե-
ւելք—4000 հոգի ճանապարհ գցվեցան
Ալժիրիայից:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԲԱՇՆՈՐԱՇԵՆԻՑ Ա. հաղորդում է.—
Մօտ օրերում անցաւ այստեղից դէպի
Պարսկաստան գեր. հայր ձերմակեանը,
որը նշանակուած է Ատրպատականի թե-
մակալ առաջնորդ: Այդ թեմը կարգու է
լաւ առաջնորդ ունենալու, ըստ որում
վերջինս կարող է մեծ գործ կատարել
Պարսկաստանում, ազատելով լուսաւոր-
չական հայերին այն միսթիսմների
ճանկերից, որոնց թիւը օր ըստ օր է ա-
ւելանում է ամենուր և որոնց ճիշդ կը-
ռապաշտ հայերին դէպի քրիստոնէական
հաւատ դարձնելն է:

Նոյն տեղից գրում են. — Այստեղից
ուղեորութեան դէպի Երևան ս. Երուսա-
ղէմի պարտուց բարձման համար ուղար-
կուած նուիրակ հայր Սահակը:

Վրոէքայում կարգում ենք. — «Նա-
թելում և կղած ֆելդշարներ պատրաս-
տող ուսումնարանի մասին շատ վատ
համբաւներ են լսվում: Ահա թէ ինչ
պատմեց մեզ մի պարոն, որը ինքն ան-
ձամբ ականատես է եղել: «Նրեխալը
այս ցրտին բոլորի են ման դալիս, մինչ-
և վրայի շապիկը չէ փառում, մաշվում,
նորը չեն առնում: Նմաբարում շատերը
յատակի վրայ են պաւկում, որովհետև
մահճակալների տակի տախտակները
այնքան հնացած են, որ երեխայք շուտ
ու մուռ դալիս վայր են թափվում: Նմե-
տակ դուգէ, որ կերակուրն էլ չորի և
քնակարանի նման կը լինի: Ուղիղ է
ֆելդշարներին դուցէ աւելի ծանր կա-
ցութիւն պատանի իւրեանց կենքի մէջ,
բայց այս ձևի օպարտական կենքն էլ
պէտքական չէ...»

ԲԱՇՆՈՐԱՇԵՆԻՑ գրում են. — Հաստատ
աղբիւրքի իմացանք, որ թեմական վե-
րատեսուց պ. Պ. կամենում է Գարալա-
զեաղի կնիքի հայաբնակ գիւղում դըպ-
րոց հիմնի: Այս հանգամանքի համար
գրուած պաշտօնական թղթի իմացանք
որ տեսուչը ուղում է իմանալ արդեօր
գիւղացիք որքան ուժիկ կարող են վե-
ճարել ուսուցչին: Այդ շատ ուրախա-
կերելի է բայց մի և նոյն ժամանակ
չենք կարող չը յայտնել և այն, որ նախ
հարկաւոր է ունեցածը պահպանել և ա-
պա նորի վերայ մտածել: Մեր խօսքը
խաչիկ գիւղի փակուած դպրոցի վերայ
է, որի համար մի քանի տեղեկութիւն-
ներ էինք ստուել «Մեղուի» մէջ (№ 75):

Պ. Վ. Գ. գրում է Ա. Ա. Յ. Ս. Ա. Յ. —
Հոկտեմբերի 28-ին ընդհանուր ժողով
կայացան հին յաջորդարանում: Ներկայ
էին մօտ 800 ժողովրդականք: Ժողովի
նպատակն էր խնդրել ս. Էմիլիանի սի-
նոդից Ախալցխայի կարապետեան ու-
սումնարանը վիճակային դպրանոցի վե-
րածել: Գեր. խօսքն վարդ. Սանդակչի
բացեց ժողովը ի Տէր հանգուցեալ Վեհ.
Գ. Կ. Գ. Գ. անուանով ճերգեցիկ խումբը
երգեց «Փառաց ի փառ» արտաշարժ
չարականը: Յետոյ հայր սուրբը կարգա-
կերպ և ազդու ճառ օրը տեղեց մինչև
երեք ժամ, որի մէջ բացադրեց թեմ.
դպրանոցի նշանակութիւնը: Երգուեցան
ազգային երգեր և խնդիրը ստորագրե-
ուց յետոյ ժողովը ցրուեցաւ: Մնալով

խրաբանչիւրը քաղցր սպասարութեան
ներքոյ:

Մի ընտանիքի հայր հետեւալ նամա-
կին է ուղղում «Վրոէքայի» խմբագրին.
— «Պ. խմբագիր, խնդրեցէք մեր հա-
րուտներին, որ իրանց ուսանող աղջ-
կերանց բացի ուսումնարանի զգեստը
ուրիշ մօդերի չորեր չը հագնեն, թէ չէ
իմ բանը շատ վատ է. հինգ աղջիկ ու-
նիմ, սրանցից երեքը ուսանում են դիմ-
նագիծում. ոչ մէկը սոցանից բաւական
չէ մնում ուսումնարանի չորով, մէկը
մօդերի չիապալ է պահանջում, միւսը
մախմուրի կուրտկայ, երրորդը բարձր
կրտսեկով կօշիկներ: Ի՞նչ անեմ, որ ջու-
րն ընկնիմ. հազիւ հազ կարողանում
եմ տարեկան ուսման վարձը 150 մա-
նէխը վճարել, այս մօդերի բաներն էլ
հրտեղից առնեմ... պ. խմբագիր, իմ
կողմից նախախիցին էլ խնդրեցէք, որ
աշակերտութիւններն արգելէ ուրիշ չորեր
հագնել: «Վրոէքայի» խմբագիրը հետե-
ւալ պատասխան է տուել. — «Վախ՛յն
հօրը, որ ուրիշ յուսով է մնում...»

Նոյն լրագրում կարգում ենք. — Այս
օրերս կուկիւս մի փողոցում մի տան
առաջ գտել են մեռած մարդու դիակ.
հանգուցեալը երկու ձեռքին բռնած է
ունեցել զինու ամաններ: Մահուան
պատճառը վերաբերում են նրա յաճա-
խակի հարեցողութեանը:

ՇԱՄԱՆՈՒՅՑ պ. Թղթակիցը գրում է.
— Եւ վերջապէս յաղթութեան դրօշա-
կը ստացաւ պ. Գեորգ Բալանթարեան-
ցի յայտնի գործակաւարը. քանի տարի
առաջ նուիրած փայտեղէնները օր ու-
սումնարանի շինութեան համար, այսօր
տալ հրաժարվում է ինքն պ. Բալան-
թարեանցը ինչից արդեօք արկաղրված
անշուշտ պիտի հակվէր իւր գործակա-
ւարի կողմը, աւելի լաւ այն չէր, որ
խոշոր և եթ պատասխանէր շինութեան
հողաբարձուների նամակին, որոնք դեռ
չինութեան սկզբում յղած էին պ. նուիր-
աւորին, որոյ համար պատուական «Մե-
ղուի» միջոցաւ յայտնված էր ի գիտու-
թիւն աղջկանց և ի զգուշութիւն
նոյն պարոնի, որ իւր գործակաւարի
խօսքերը ձայն բարբառոյ յանապատի
լինին. Բայց աւագ ի դուր անցան մեր
նախագահութիւնները և յայտնած չը-
նորհակալութիւնները, Հողաբարձուները
թ. առաջնորդի անխնայ աշխատութեամբ
և խրախուսութեամբ շինութիւնը վաղուց

արդէն հասցրած են կոծի տակ, որ պի-
տի ծածկվի, բայց ցուօք որտի պիտի
ստած, որ տանոյ 8 միայն լավեց պ.
նուիրաւորի մեթոմբ. և այն էլ որդւս
թէ դիտմամբ ի վնաս ուսումնարանի, ո-
րովհետև եթ չը ծածկվի. ձմրվան
ցրտերը և ձիւնը կարող են վնասել բաց
մնացած պատերին: Կը յուսանք, որ հո-
գաբարձուք մի քանիսի բացառութեամբ
թ. առաջնորդի անձնադո՛ս աշխատու-
թեամբ ու օգնութեամբ կարողանան շու-
տով ծածկել ի դարմանս պ. նուիրաւոր-
ին և ի նախադիմ գործակաւարին:

Խմբագիր Պ. ՍԻՄԵՆՆԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՏԻՍԱՆՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Օգեստացից եկած
ԵՐԱԾՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՂԻ
որ սովորցնում է
ՇՏԱՐԿԻ ՄԵՏՈԳՈՎ
ցանկաւում է ունենալ դասեր
Հարցէ՛ք ԷԼԲՐՈՒՆ հեղինակուած № 1.
1—4

ՅԱՅՏՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ՍԵՅՏԱՆԻ Վապիտան Պետրոս Մաղաթ-
եանց) ԵՐԱՍՈՒՐՈՒԹԻՒՆԸ ընտրի թղթ-
թի վերայ մաքուր արուած I, II և III
մասերը միայն լայն տեսակ և արդէն
վաճառվում է Բաղվում իմ սեպական
սպարանում և թիֆլիզի գրավաճառա-
նոցներում. գինն է 1 ռ. 20 կ.

Ցանկացողները կարող են դիմել հե-
տեւալ հասցեով. — Въ Баку въ Типо-
графіи Александра Гасабова.
11—30

Կովկասեան գրավաճառանոցի Զ.
Գրիգորեանցի հրատարակութեամբ
Լ Ո Ս Տ Ե Ս Ա Ւ

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Գ Ա Ս Ա Գ Ի Բ Բ
Հայոց գաղութների համար մա-
սին ուսումնական և բնական
(առաջին շրջան) 40 պատկերնե-
րով. Աշխատանքից Աղէք. Սի-
մեոնեաց: Գինն է 60 կոպէկ:
(10—5)

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

„ԲԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ“

Հայոց դպրոցների համար
Գ Ր Ե Ց

Մակար Տէր-Սարգսեանց

Ե ր Կ ր օ ր Դ ր արկալիսեալ և ճոխացուցեալ հրատարակութիւն, վիմա-
րուած ընտրի կիսալեքսանդրեան թղթի վերայ.
Գ ի ն ը. հատով ամսոյներին 25 կ.
Գ ու մ ր ու վ ամսոյներին 20 կ.

Տ Ե Տ Ր Ա Կ Ն Ե Ր

Հայկական գիւղացութեան համար № 1, 2, 3, 4 պատրաստած յատ
կապէս վերոյիշեալ գեղարվութեան ուղղութեան համեմատ:
Հարկը չորս — 4 ուրիշ. Հատը 5 կոպէկ.
Վաճառվում են Կենդանական Գրավաճառանոցում.
2—4

Վ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԳՐԱԲԱՆՈՒԹՈՒՄ
Վաճառվում է երկու նոր բրայի
ՈՍԿԻ ԶԿՆԻՅ Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ Թարգ. Գամառ-Քաթիլայի
Գինն է 40 կոպէկ:
ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ և ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԼՈՒԻՉԱ ԲԻԻՆԵՐԻ Թարգ. Շարուգալեան: Գինն է 40 կոպէկ:
ԱՐԵՆԱՐԻՍ ՀՍԱՅՑ-ՄՐԶԻՆ, Թարգ. Գիւլագանդի
Գինն է 40 կոպէկ: